ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ

ՀՐԱՄԱՆ

N° 090/2017-Ա
«07» հունիսի 2017թ.

ՀՐԱՄԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԼՂՀ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արդարադատության ակադեմիայի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին 2015 թվականի ապրիլի 10-ի փոխըմբռնման հուշագրով, «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածով, 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից 26.01.2017թ. թիվ ԿԽ-001/17/4 որոշմամբ հաստատված դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2017թ. ուսուցման ծրագիրը, Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից 06.06.2014թ. ընդունված թիվ 14-Լ որոշումը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի 22.03.2017թ. թիվ 6/20-03-17 գրությունը՝

Հրամայում եմ

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2017թ. ուսումնական տարվա ԼՂՀ դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց բաշխումն ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2017թ. ուսումնական տարվա ԼՂՀ դատախազների և քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 2-ի:

Ռեկտոր՝ **Ս. Առաքելյան**